Անահիտ Կարապետյան
Լոռու մարզ,ք.Վանաձոր Ֆորտունա հեռուստաընկերություն (Վարդանանց 62),

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. **Արամ Ղազարյան**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետեւյալ թեմաների մասին:

1.ՀՀԱՆ պաշտոնական տեղեկատվության համաձայն՝կարմրուկի ,կապույտ հազի հիվանդացության դեպքերը ավելացել են .ինչպիսի՞ն է վիճակագրությունը Լոռու մարզում,արդյո՞ք բավարար դեղաչափով ապահովված են մարզային բուժհաստատությունները ,ինչպե՞ս է իրականացվում պատվաստումների գործընթացը ,կանխարգելիչ ի՞նչ միջոցառումներ են կազմակերպվում :

2.Որքանով է Լոռու մարզը պատրաստ նոր ուսումնական տարվան,ինչպիսի՞ն են անցնող կրթական տարվա արդյունքները, միասնական քննությունների և բուհերի ընդունելության Լոռու մարզի վիճակագրությունը: Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցիչների թափուր հաստիքների համալրմանն ուղղված ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ,ինչպե՞ս է իրականացվում առաջին դասարանցիների էլեկտրոնային գրանցման գործընթացը,եղել են արդյոք դիմում –բողոքներ ,քանի՞ առաջին դասարանցի ունի Լոռու մարզը եւ կա արդյո՞ք բնակավայր ,որտեղ առաջին դասարանցի գրանցված չէ:

3. Լոռու մարզում տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքների վերացման, տնտեսավարողներին աջակցության հետ կապված ինչ միջոցառումներ են իրականացվել , գյուղատնտեսության ոլորտում բնակչությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու ինչ ծրագրեր կան, աղետի գոտում ենթակառուցվածքային համակարգի վերականգնման հարցում կա՞ն խնդիրներ ,եթե այո՝որոնք են դրանք:Մայիսի 25-ի ջրհեղեղի հասցրած վնասը ինչ թիվ է կազմում:

4 Սուբվենցիոն ծրագրերի մասով մինչեւ այս պահը արված աշխատանքների ամփոփում ,ոլորտային ինչ առաջնահերթություններ են արվել ,ինչպես է իրականացվում վերահսկողությունը ,ինչպիսի խնդիրներ են արձանագրվել: Կառավարությունը հաստատեց Լոռու մարզին հատկացվելիք շուրջ 174 մլն դրամի մասին ,ինչի՞ն է ուղղվելու գումարը :

Հարգելի ,պրն.Ղազարյան խնդրում ենք Ձեր պատրաստակամությունը՝ Ֆորտունա հեռուստաընկերության <<Թղթապանակ>> լրատվական ծառայության տաղավարում հյուրընկալվելու եւ աղետի գոտու վերականգնման շուրջ տարված աշխատանքների մասով հարցազրույց տրամադրելու համար:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

Կանխավ շնորհակալ եմ՝
Անահիտ Կարապետյան Ֆորտունա ՀԸ <<Թղթապանակ>>լրատվական ծառայության ղեկավար
22 08 2024